ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

«ԻՄՊԻՉՄԵՆՏ» ԴԱՇԻՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Վ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ.**

1. Տարբեր հեռուստաընկերություններից՝ նրանց կողմից հեռարձակված նախընտրական քարոզչությանը վերաբերող հեռուստահաղորդումների տեսագրությունները պահանջելու, ինչպես նաև նրանց կողմից սահմանված առևտրային և քաղաքական գովազդի սակագները պահանջելու մասին միջնորդությունը մերժել, նկատի ունենալով, որ գործում առկա նյութերն ունեն բավարար ապացուցողական նշանակություն համապատասխան եզրակացություն անելու համար:

2. «Բարգավաճ Հայաստան» և Հայաստանի հանրապետական կուսակցություններից՝ իրենց անդամների անձնական տվյալները պահանջելու մասին միջնորդությունը մերժել, քանի որ դրանում նշված պահանջն իրավաչափ չէ, չի բխում «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի պահանջներից և այն չի առնչվում գործի քննության առարկային:

3. ՀՀ Նախագահից՝ ՀՀ տարածքից դուրս գտնվող ՀՀ քաղաքացիների թվաքանակի վերաբերյալ տվյալներ պահանջելու մասին ներկայացված միջնորդությունը մերժել՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 05.06.2007թ. թիվ 007-2717 գրությամբ տրված պատասխանն այն մասին, որ ՀՀ տարածքից դուրս գտնվող ՀՀ քաղաքացիների ընդհանուր հաշվառում չի իրականացվում:

4. Հանրային հեռուստաընկերությունից և Հանրային ռադիոյից տեսագրությունների և ձայնագրությունների պահանջի վերաբերյալ միջնորդությունը մերժել, նկատի ունենալով, որ դատաքննության ընթացքում հետազոտված նյութերը բավարար պատկերացում են տալիս տվյալ միջնորդության մեջ ներկայացված խնդրի վերաբերյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

7 հունիսի 2007 թվականի
ՍԴԱՈ-81